

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-ԻՆ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՄԲ ԿՆՔՎԱԾ՝ «2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈԿՏԵՄԲԵՐԻ 19-ԻՆ ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՄԲ ԿՆՔՎԱԾ՝ «ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՅՄԱՆ ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԵՏ ԿԱՊՎԱԾ ՆՅՈՒՄԻՍԱՏԱՆՍՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ (ՆԱՏՕ) ՆԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱՐՅԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՆԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ ԵՎ ՆԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱԽՄԲԻ ԹՎԱԿԱԶՄԻ ԱՎԵԼԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՆԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 ապրիլի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի մարտի 26-ին եւ 2011 թվականի ապրիլի 4-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Նայասարանի Նանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Նյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրա-

վական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական գորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կարարելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 12.04.2011թ. ՏՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՏՏ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի գրավոր բացատրությունը, հերազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Նայասրանի Նանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Նյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական գորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կարարելու մասին» նամակների փոխանակմամբ կնքվող համաձայնագիրը (Նամաձայնագիր) ստորագրվել է 2011 թվականի մարտի 26-ին՝ ՏՏ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի կողմից, եւ 2011 թվականի ապրիլի 4-ին՝ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի օգնականի կողմից:

2. Նամաձայնագրի նպատակն է Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի (այսուհետ՝ ՄԱԱՌԲ) կազմում հայկական գորախմբի գրնվելու ժամկետի երկարաձգումը եւ հայկական գորախմբի թվաքանակի ավելացումը:

3. Սույն Նամաձայնագրի համար պայմանագրաիրավական հիմք է հանդիսանում «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Նայասրանի Նանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Նյուսիսատլանտյան դաշինքի

(ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագիրը, որը վավերացվել է ՆՏ Ազգային ժողովի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ԱԺՌ-178-Ն որոշմամբ:

4. Սույն Նամաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը պարտավորվում է, մասնավորապես՝

- մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգել ՄԱԱՌԻ-ի կազմում Նայասրանի Նանրապետության զինված ուժերի ստորաբաժանումների մասնակցությունը,

- ավելացնել հայկական զորախմբի թվաքանակը՝ հասցնելով այն մինչև 130-ի, իսկ հերթափոխների ժամանակ՝ մինչև 260-ի:

Գերմանիայի Դաշնային Նանրապետության պաշտպանության նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, վերջինս իր վրա է վերցնում հայկական զորախմբի հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ զինձառայողների ամսական լրացուցիչ վարձատրությունների:

Սույն Նամաձայնագիրն ուժի մեջ կմտնի դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին ՆԱՏՕ-ին ծանուցելու օրվանից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ դեկավարվելով Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2011 թվականի մարտի 26-ին եւ 2011 թվականի ապրիլի 4-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «2009 թվականի հոկտեմբերի 19-ին եւ 2009 թվականի հոկտեմբերի 20-ին նամակների փոխանակմամբ կնքված՝ «Աֆղանստանում միջազգային անվտանգության աջակցման ուժերի կազմում Նայասրանի Նանրապետության զինված ուժերի ստորաբաժանման մասնակցության հետ կապված Նյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) հետ իրավական հարցերի կարգավորման վերաբերյալ» համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման եւ հայկական զորախմբի թվակազմի ավելացման վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորություն-

ները համապարասխանում են Նայասրանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 ապրիլի 2011 թվականի  
ՍԴՈ-958